ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 24 » սեպտեմբեր 2025թ. N 5817 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 4625-Ա, 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 4598-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 5230-Ա, ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/4330-25 առ 08.09.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4625-Ա հրամանի հավելվածի 53-րդ տողի 6-րդ սյունակի «24008» թիվը փոխարինել «24193» թվով, իսկ 72-րդ տողի 5-րդ սյունակի «100մգ/մլ; (10/2x5/) ամպուլներ 10մլ բլիստերում» բառերը փոխարինել «100մգ/մլ; (5/1x5/) ամպուլներ 10մլ բլիստերում, (10/2x5/) ամպուլներ 10մլ բլիստերում» բառերով:

2. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների ընդունման մասին» N 4598-Ա հրամանի հավելվածի 5-րդ և 10-րդ տողերի 3-րդ սյունակի «Կոդելակ Նեո-Օտսֆարմ» բառերը փոխարինել «Կոդելակ Նեո-Օտիսիֆարմ» բառերով:

3. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների ընդունման մասին» N 5230-Ա հրամանի հավելվածի 10-րդ տողի 12-րդ սյունակի «19618/2/1» թիվը փոխարինել «19618/2/2» թվով, իսկ 11-րդ տողի 12-րդ սյունակի «22018/2/1» թիվը փոխարինել «22018/2/2» թվով:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

5. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164